

Արտակարգ իրավիճակների 2007 թվականի վիճակագրություն

Համաձայն ՀՀ ՏԿՆ Հայաստանի փրկարար ծառայության տվյալների՝ 2007 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է ընդհանուր թվով 7578 արտակարգ իրավիճակ (2006թ.՝ 7138), որոնց հետեւանքով զոհվել է 529 (2006թ.՝ 481) եւ տուժել 5866 (2006թ.՝ 4577) մարդ: Մասնավորապես՝ ՀՓԾ կողմից արձանագրվել է հրդեհի 2284 (2006թ.՝ 2541) ահազանգ, որոնցից հետագայում հրշեջ տեսչության կողմից որպես հրդեհ հաշվառվել է 934 դեպք: Հրդեհների հետեւանքով զոհվել է 20 (2006թ.՝ 40), տարբեր աստիճանի այրվածքներ ու վնասվածքներ ստացել 42 (2006թ.՝ 41) մարդ, պատճառվել է շուրջ 345 մլն. դրամի նյութական վնաս:

Պայթյունների թիվը կազմել է 28 (2006թ.՝ 29), որոնց հետեւանքով զոհվել է 4 (2006թ.՝ 10) եւ տուժել 32 (2006թ.՝ 35) մարդ: Արձանագրվել է փլուզման 72 (2006թ.՝ 421) դեպք, որոնց հետեւանքով զոհվել է 4 (2006թ.՝ 1) եւ տուժել 34 (2006թ.՝ 5) մարդ:

2007 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է երկրաշարժի 157 դեպք (2006թ.՝ 144)՝ առանց մահացու ելքերի:

Տարվա ընթացքում գրանցվել է ջրհեղեղի 86 (2006թ.՝ 16), սելավի 38 (2006թ.՝ 6), քարաթափման 3 (2006թ.՝ 3), սողանքի 7 (2006թ.՝ 5), ուժեղ քամու 24 (2006թ.՝ 21) փլվածքների 3 (2006թ.՝ 5), տեղատարափ անձրեւի 19 (2006թ.՝ 4), ուժեղ կարկտի 43 (2006թ.՝ 25) դեպք, բարեբախտաբար՝ առանց զոհերի:

Ցրտահարման ոչ մի դեպք չի արձանագրվել: Մահացու ելք չի արձանագրվել նաեւ պայթուցիկ սարքերի տեղադրման 10 (2006թ.՝ 4) եւ զենք, զինամթերքի հայտնաբերման 7 (2006թ.՝ 5) դեպքերում:

Գրանցված թվով 15 (2006թ.՝ 17) ձմաբքի հետեւանքով տուժել է 2 մարդ (2006թ.՝ 1 զոհ), 1 կայծակնահարման (2006թ.՝ չի գրանցվել) հետեւանքով զոհվել է 1 մարդ:

2007 թվականին արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 1950 պատահար (2006թ.՝ 1575), այդ թվում՝ երկաթգծի ուղիների վթարի 6 դեպք եւ օդային աղետի 1 դեպք:

Պատահարների զոհ է դարձել 371 (2006թ.՝ 329) մարդ եւ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացել 2724 (2006թ.՝ 2106) մարդ:

Գրանցվածների շարքում գերակշռող են եղել թունավորումների դեպքերը՝ 2739 (2006թ.՝ 2245), որոնց հետեւանքով զոհվել է 46 (2006թ.՝ 29) եւ տուժել 2992 (2006թ.՝ 2382) մարդ:

Արձանագրվել է ջրահեղձման 19 (2006թ.՝ 26) դեպք, որոնց արդյունքում զոհվել է 20 (2006թ.՝ 27) եւ տուժել 2 (2006թ.՝ 5) մարդ:

Գրանցվել է դիակի հայտնաբերման 62 (2006թ.՝ 43) դեպք՝ թվով 63 զոհ (2006թ.՝ 45):

Հանրապետության տարածքում արձանագրվել է համաճարակի 11 (2006թ.՝ 2) դեպք եւ տուժել է 38 մարդ:

Այսպիսով, 2007թ. ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած տարաբնույթ արտակարգ իրավիճակների արձագանքման ուղղությամբ ՀՓԾ ստորաբաժանումների կողմից իրականացվել է 4893 ելք: